«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

Պետական համալսարանի ռեկտոր՝

Ե. Ս. Սերոբյան

16 մայիսի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, դասիչ՝ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտությամբ:

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի աշխարհագրության, քիմիայի ու կենսաբանության, և մանկավարժության ամբիոնների 2022 թվականի մայիսի 15-ին կայացած համատեղ նիստում:

Նիստին մասնակցել են վերոնշյալ ամբիոնների վարիչներ՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ.Մարտիրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Ղուկասյանը, ամբիոնների դասախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Մկոյանը, երկրաբանական գիտությունների դոկտոր՝ Ա. Թամրազյանը, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ս. Ալեքսանյանը, աշխարհագրական գիտություն-

ների թեկնածու, դոցենտ՝ Ա. Ներսիսյանը, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Վալեսյանը, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ. Ավետիսյանը, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Համազարյանը, պատմական գիտությունների թեկանծու, դոցենտ՝ Ա. Բոյաջյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Գևորգյանը:

Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները աշխարհագրության ուսուցման գործընթացում» թեկնածուական ատենախոսությունը, համաձայն առաջադրված նպատակի, նվիրված է հանրակրթական դպրոցի միջին օղակի՝ 5-9-րդ դասարանի աշակերտների, հետազոտական կարողությունների զարգացմանը: Մասնավորապես՝ աշխարհագրություն առարկայի օրինակով, ամբողջական հիմքով մշակված է դրանց մեթոդական համակարգը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքը պարունակում է 21 նկար և 14 աղյուսակ:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեսական հիմքերը և մեթոդաբանական նախադրյալները», հեղինակը տրամաբանական ամուր կապով՝ ենթագլուխների ճիշտ հերթագայությամբ, կարողացել է ներկայացնել մասնագիտական ժամանակակից գրականության մեջ առկա անհրաժեշտ տեսական ու մեթոդաբանական այն նախադրյալները, որոնք հիմք են ձևավորում հետազոտահեն ուսուցման և աշակերտների հետազոտական կարողությունների զարգացման համար:

Երկրորդ՝ «Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղիներն ու միջոցները» գլխում, հեղինակը կարողացել է ժամանակակից դպրոցի պահանջներին համապատասխան բացահայտել դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման

այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են աշխարհագրության ուսուցման ընթացքում: Ակնհայտ է, որ դրան նպաստել է «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում դասավանդման, հետազոտության բազա ընտրված դպրոցներում իրականացված փորձարարական-պրակտիկ հետազոտությունների և միջազգային անձնական փորձի (ուսուցում՝ Վիեննայի Բնական ռեսուրսների և կենսաբանական գիտությունների համալսարանում) ներդաշնակումը:

Երրորդ գլխում սահմանվում են փորձարարական դասերի անցկացման նպատակները, չափանիշները և ներկայացվում են դրանց ընթացքն ու արդյունքները: Ընդ որում, այս ամենն իրականացվել է փորձարարական հիմնավորմամբ, որի արդյունքում բացահայտվել են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաների ներդրման ու կիրառման արդյունավետ միջոցները՝ աշխարհագրության ուսուցման ընթացքում:

Ներկայացված հետազոտությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևորություն: Մասնավորապես, մշակված և հիմնավորված է աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման գործընթացի արդյունավետ համակարգը: Այն կարելի է լիարժեք ձևով կիրառել հանրակրթական դպրոցի միջին օղակում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Հետազոտական օբյեկտի և առարկայի ճիշտ ընտրությունը, առաջադրված հետազոտական խնդիրների տրամաբանված ենթակարգությունը, կիրառված մեթոդների արդյունավետությունը հեղինակին հնարավորություն են տվել կատարել նաև արժեքային եզրակացություններ և նպատակային առաջարկություններ: Ըստ այդմ, աշխատանքում առկա մի շարք արժանիքներ, որոնք համակարգված ձևով կարելի ներակայացնել ներքոհիշյալ կետերի միջոցով.

- Մանրամասն վերլուծվել են հետազոտահեն ուսուցման տեսական հիմքերը, ներկայացվել հետազոտական կարողությունների զարգացման գործընթացի փուլերը:

- Հիմնավորված է հետազոտահեն ուսուցման մեթոդական այն համակարգը, որը կարող է նպաստել աշակերտների ինքնավարության, ինքնակրթության, տեղեկատվական հոսքերում կողմորոշման, գիտահեն որոշումների կայացման և հայրենաճանաչողության կարողությունների զարգացմանը, հետազոտական գործունեությանը:
- Համակարգված ձևով ներկայացված է ժամանակակից տեխնոլոգիաների դիդակտիկական ներուժի կիրառման այն հնարավորությունները, որոնք արդյունավետ են ուսումնառության շարժառիթների, ինքնուրույն գործունեության, բարդ և իրական հիմնախնդիրների լուծումների որոնման գործընթացում:
- Մշակած մեթոդական համակարգը, թեմատիկ միավորները, հետազոտական առաջադրանքները, ուղեցույցները, մեթոդական հանձնարարականները, գնահատման սանդղակները, առցանց հարթակում հեղինակած առաջադրանքները, աշխարհագրական հետազոտական գործընթացի մոդելը, հեղինակային դասերի պլանները, աշխարհագրության ուսուցման գործընթացին հարմարեցված ուսուցման տեխնոլոգիաներն արդյունավետ են և նպաստում են 5-9-րդ դասարաններում աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացմանը:
- Համակարգված ձևով ներկայացված են նաև հետազոտական կարողությունների զարգացման առաջնային պայմանները, որոնք նպաստում են սովորողների կրթական կարիքների բավարարմանը, ուսուցիչների վարպետության բարձրացմանը, միջառարկայական հստակ կապերի արդյունավետ կիրառմանը, դպրոցականների ինքնավարության բարձրացմանը, աշխարհագրական գործնական խնդիրների լուծմանը, հետազոտական, քննադատական, ստեղծագործական մտածողության կարողությունների զարգացմանը:

Միաժամանակ պետք է նկատել, որ աշխատանքում առկա են տեխնիկական վրիպակներ և շարահյուսական անհարթություններ: Բացի դրանից, աշխատանքում

առաջադրված հետազոտական որոշակի դրույթների հարցում առկա են հեղինակի և մեր մոտեցումների տարբերություններ:

1. Մասնավորապես, առաջին գլխում 16-րդ էջում քննարկվում են Դեմոկիրտի մոտեցումները, իսկ 18-19-րդ էջերում դարձյալ շեշտադրվում է, որ հետազոտահեն ուսուցման ակունքները Չինաստանում և Հին Հունաստանում են: Կրկնությունից խուսափելու համար ակունքներին կարելի էր անդրադառնալ 16-րդ էջում:
2. 47-49 էջերում մինչև Բ.Բլումի տաքսոնոմիայի քննարկմանը ծավալուն անդրադարձ է կատարվում հետազոտական գործունեության ընթացքին, յուրահատկություններին, Գ. Էդիլյանի և Ա. Մակարենկոյի մանկավարժական հայացքներին, որը կարելի էր հակիրճ ներկայացնել՝ շաղկապելով տաքսոնոմիայի ներկայացման հետ:
3. Գլուխ 2-ի, երրորդ ենթագլխում (էջ 107-112) ուսումնական ցիկլի կիրառման մոտեցումները մանրամասն ներկայացված են 7-րդ դասարանի օրինակով: Կարելի էր ներկայացնել նաև այլ դասարանների օրինակով և կատարել համեմատական վերլուծություն:
4. Թեպետ աշխարհագրության գործող և նոր չափորոշչային պահանջներին անդրադարձ կատարվել է, սակայն նոր չափորոշիչների ներդրման գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունները սահմանափակ են:

Սակայն, վերոհիշյալ դիտարկումներն աշխատանքի որակի և գնահատականի վրա էական ազդեցություն չունեն: Առաջադրված գիտական նորույթը, պաշտպանության ներկայացված դրույթներն ամբողջապես բավարարում են անհրաժեշտ պայմանները, և որպես գիտամեթոդական նորույթ նախապես հրատարկվել են ԲՈԿ-ի կողմից երաշխավորված գիտական պարբերականներում:

Եզրակացություն – Անի Սեյրանի Մկրտումյանի «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման տեխնոլոգիաները

աշխարհագրության ուսուցման գործընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, գիտական նորույթ, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող ավարտուն հետազոտություն է, որը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (աշխարհագրություն) մասնագիտական թվանիշին, իսկ հայցողը միանգամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Աշխարհագրության, քիմիայի և
կենսաբանության ամբիոնի վարիչ,
աշխ. գիտ. թեկն., դոցենտ՝ Լ. Մարտիրոսյան

Մանկավարժության ամբիոնի վարիչ,
մանկ. գիտ. թեկն., դոցենտ՝ Լ. Ղուկասյան

Ամբիոնների վարիչներ Լ.Մարտիրոսյանի և Լ.Ղուկասյանի ստորագրությունները հաստատում եմ

ՇՊՀ գիտական քարտուղար՝ Կ. Պետրոսյան

16. 05. 2022 թ.